ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<Մնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհրդի 09.08.2024թ. նիստի

ք.Երևան *09.08.2024թ.*

Նախագահությամբ Լ.Պետրոսյանի

քարտուղարությամբ Ա.Էլինյանի

Նիստին մասնակցում էին Դիտորդ խորհրդի հետևյալ անդամները՝

1. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Լևոն Պետրոսյան*
2. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Վահագն Ավագյան*
3. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Հովհաննես Եղյան*
4. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Խաչիկ Նազարյան*
5. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Տիգրան Սահակյան*
6. *Դիտորդ խորհրդի անդամ՝Գևորգ Ավագյան*

Քվորումն ապահովված է, և Դիտորդ խորհրդը իրավազոր է որոշումներ ընդունել օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:

Օրակարգում՝

1. <<Մնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից՝ Խաչիկ Արշամի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի վերաբերյալ՝ ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված Խաչիկ Գրիգորյանի . թիվ Մ/37915-2024 դիմումի հիման վրա՝ ՍԳԿԿ՝ ԻԿ Դիտորդ խորհրդին 01.07.2024թ.-ին ներկայացված՝ 13.06.2024թ.-ի եզրակացության քննարկում:
2. Ընթացիկ հարցեր :

Կապված Դիտորդ խորհրդի նախագահ Արսեն Չիտչյանի բացակայության հանգամանքով, համաձայն <<ՍԳԿԿ>> ԻԿ Կանոնադրության 10-րդ հոդվածի 18-րդ կետի նիստը վարում է Դիտորդ խորհրդի ամենատարեց անդամ Լևոն Պետրոսյանը:

Մինչև օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը, <<Մնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լ. Պետրոսյանը հանդես եկավ ողջույնի խոսքով:

Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լևոն Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 1-ին հարցը և այն դրվեց քննարկման:

1. Քանի որ 10.07.2024թ. կայացած Դիտորդ խորհրդի նիստին՝ ՍԳԿԿ՝ ԻԿ Դիտորդ խորհուրդը որոշել էր չհաստատել <<Մնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> ԻԿ Կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը, այն է՝ կարճել Խաչիկ Արշամի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի գործողությունների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը, այլ Մ.Եղիազարյանին տրամադրել 10 օրյա ժամկետ վարույթին վերաբերվող լրացուցիչ

փաստաթղթեր ներկայացնելու համար: Ուստի Դիտորդ խորհրդին հրավիրվել էր նաև Խաչիկ Արշամի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանը: Նա նիստի ժամանակ լրացուցիչ ներկայացրեց ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/1817/04/22 գործով 24.07.2024թ. որոշումը, որով Խաչիկ Արշամի Գրիգորյանի բողոքը՝ սնանկության գործով կառավարչի անգործության դեմ, մերժվել է: Միաժամանակ Մակար Եղիազարյանը ներկայացրեց 09.07.2024թ. ՀՀ Քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության գրությունը, որով հաստատվում է, որ նա 08.07.2024թ.հաղորդում է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեի Գեզարքունիքի մարզային վարչություն և ներկայացված հաղորդման հիման վրա Խաչիկ Գրիգորյանի նկատմամբ քրեական գործ է հարուցվել:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին Լևոն Պետրոսյանը, Վահագն Ավագյանը, Տիգրան Սահակյանը, Հովհաննես Եղյանը, Գևորգ Ավագյանը և Խաչիկ Նազարյանը:

<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Հաստատել <<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> ԻԿ Կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը, այն է՝ կարճել Խաչիկ Արշամի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի գործողությունների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը:

Որոշումը դրվեց քվեարկության.
Կողմ-6
Դեմ-0
Չեռնպահ-0
Որոշումը ընդունվեց միաձայն :

Նիստը նախագահող՝ Լ. Պետրոսյան

Քարտուղար՝ Ա. Ելինյան